

ԳԵՐԱՊՈԱՅԾԱՌ ԱՆԴՐԷԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԲԵՐԻՈՅ»
ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ (1861)

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@aya.sy

Պատմական Հալէպ քաղաքի մասին դարերու ընթացքին ստեղծուած է բազմալեզու հսկայական գրականութիւն: Քաղաքին նուիրուած գիրքերն ու յօդուածները իրենց քանակով ու որակով պատկառելի հարստութիւն մը կը կազմեն: Արեւելեան քիչ քաղաքներ այնքան լայն ուշադրութեան արժանացած են, որքան՝ Հալէպը: Արար մատենագիրներու տասնեակ մը հատորներու կողքին, Հալէպի մասին կան ուշ ժամանակի տեղացի եւ օտար հեղինակներու ուսումնասիրութիւններ, դիւանագիտական ներկայացուցիչներու, միսիոնարներու, արեւելագէտներու, ճանապարհորդներու մեծաթիւ ու բազմատեսակ աշխատութիւններ՝ ուսումնասիրութիւններ, օրագրութիւններ, յուշագրութիւններ, ժամանակագրութիւններ, տպաւորութիւններու գրառումներ, պատմական-տեղագրական բնոյթի գործեր, եւլն, եւլն:

Այս բոլորէն անմասն չէ մնացած նաեւ հայ պատմագրական միտքը: Հալէպը, որպէս վաճառաշահ մեծ կեդրոն, եւ որպէս հայ կեանքի կրօնական-մշակութային-տնտեսական կարեւոր ուստան, շարժած է հետաքրքրութիւնը բազմաթիւ հայ հեղինակներու, որոնք դարերու ընթացքին անոր մասին ձգած են արժէքաւոր վկայութիւններ: Այսօր այդ վկայութիւնները կը հանդիսանան կարեւոր սկզբնաղբիւր ոչ միայն հալէպահայ գաղթօճախի պատմութեան, այլեւ՝ Հալէպ քաղաքին համար ընդհանրապէս:

Հալէպահայութեան անցեալին նուիրուած եւ մեզի ծանօթ ամբողջական առաջին գործը 1742ին Տէր Սարգիս քահանայի արարելէն լեզուով շարադրած գիրքն է՝ « تاريخ الكنيسة الارمنية بحلب » (Պատմութիւն Հալէպի Հայ Եկեղեցւոյ) խորագիրով¹: Այսօր, դժբախտաբար, կորսուած է հետքը պատմական այդ մեծարժէք հատորին: Կարելի է միայն երեւակայել, որ միջհամայնքային վէճերու եւ պայքարներու այդ շրջանին գրի առնուած այս գիրքը եթէ պահպանուած ըլլար, ապա կարեւոր ներդրում կրնար ունենալ հալէպահայութեան պատմութեան ուսումնասիրութեան համար, ու որոշակի լոյս սփռել մոռցուած բազմաթիւ դէպքերու ու դէմքերու վրայ:

Նոյն՝ ԺԸ՝ եւ յաջորդ՝ ԺԹ՝ դարերէն մեզի հասած են նաեւ գուտ կրօնական հենքի վրայ ստեղծուած վիճարանական բնոյթի արարելէն քանի մը հատորներ, որոնք, որքան ալ գրուած ըլլան հայ եկեղեցւոյ դաւանանքէն տարրեր դաւանանք ունեցող հայ եւ օտար անձնաւորութիւններու կողմէ եւ ունենան իրենց տեսակէտերը պաշտպանելու բացայայտ միտում, բայց եւ այնպէս զերծ չեն պատմական որոշ արժէքէ եւ ունին ճանաչողական մեծ նշանակութիւն: Այդ գիրքերուն մէջ կ'արտացոլան ո՛չ միայն ժամանակի մտայնութիւնը, այլ նաեւ

կր տրուին հալչպահայ կեանքէն որոշ դրուագներ ու մանրամասնութիւններ՝
ծանօթ դէպքերու ու դէմքերու մասին: Վիճարանական-դաւանարանական այս
գործերէն առանձնապէս կ'արժէ յիշատակել Բարսեղ Եպիսկոպոս Այվազեանի
< کتاب مجادلة بين ارمن الكاثوليكين وبين ارمن المنشقين > (Գիրք վիճարանու-

թեանց հայ կաթողիկէներու եւ անջատուած հայերու [առաքելականներու - Մ.Մ.]
միջեւ) գիրքը, գրուած՝ 1844ին, որ կը պարունակէ նոյն օրերու հալչպահայ գա-
ղութի ներքին կեանքէն քաղուած հետաքրքրական բազմաթիւ մանրամասնու-
թիւններ²:

Այլ առիթի ձգելով դաւանարանական բովանդակութեամբ ստեղծուած ա-
րար-քրիստոնէական գրականութեան քննարկումը (որ կարելոր մասով ունի
«հալչպեան» ծագում), այս յօդուածով կը ներկայացնենք 1861ին գրուած եւ
«մայրաքաղաք» Հալչպին նուիրուած հայերէն անտիպ եւ հայ բանասիրութեան
ցարդ անծանօթ հետաքրքրական ձեռագիր հատոր մը՝ «Պատմութիւն Մայրա-
քաղաքին Բերիոյ» խորագիրով, որուն հեղինակն է Գերապայժառ Անդրէաս Ա-
ղեքսանդրեանը (1835-1915):

Աղեքսանդրեանի ձեռագիրը կը պահուի Լիբանանի Չմմառու Վանքին հա-
յերէն նոր ձեռագիրներու հաւաքածոյին մէջ³, թիւ 398ի տակ (հին թիւ՝ 663)⁴:
Մեզի ծանօթ հայերէն ձեռագրացուցակներուն մէջ նոյն գիրքէն այլ օրինակի
մը կարելի չեղաւ հանդիպիլ:

Գերապայժառ Անդրէաս Աղեքսանդրեան ծնած է Կիւրին, 4 Յունուար
1835ին: 1 Յունուար 1850ին ան կը մտնէ Չմմառու Վանքին ենթակայ Եւզոկիոյ
Անարատ Յղութեան նախապատրաստական ընծայարանը, ապա, 19 Հոկտեմ-
բեր 1854ին կը դրկուի Չմմառու, ուր կարճ ժամանակ անց ընծայարանի տեսուչ
կը կարգուի, իսկ 14 Սեպտեմբեր 1856ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի
եւ 1865-1866 կը ծառայէ որպէս վերակացու Չմմառու նորընծայարանին: Վան-
քին մէջ կը վարէ նաեւ այլ պաշտօններ:

Իր նոր պաշտօնատեղին՝ Մալաթիա մեկնումի ճամբուն վրայ, ան կը հան-
դիպի Պոլիս, եւ պատրիարք Անտոն Հասունեանի կողմէ Պոլսոյ ընծայարանին
մէջ պաշտօնի կոչուելով կը հրաժարի Մալաթիա ճամբորդութենէն:

1868-1869ին կը շրջի Չմիւռնիա, Աղեքսանդրիա, Գահիրէ, Պէյրութ, Երու-
սաղէմ: 1870ին կ'ընկերակցի Վատիկանի Առաջին Ժողովին մասնակցող հայ կա-
թողիկ պատուիրակութեան:

23 Հոկտեմբեր 1880ին կը կոչուի Չմմառու Վանքի մեծաւորի պաշտօնին,
գոր կը վարէ ամբողջ 29 տարի՝ մինչեւ 5 Մարտ 1909: Այդ տարիներուն ան վան-
քէն ներս կը տանի շինարարական արդիւնաւէտ գործունէութիւն:

Գեր. Աղեքսանդրեան կը վախճանի Չմմառու, 28 Դեկտեմբեր 1915ին⁵:

Աղեքսանդրեանի կեանքին կարելոր մասը կազմած է գրական-բանասիրա-
կան գործունէութիւնը, որ մեծ մասամբ կ'առնչուի հայ կաթողիկէ համայնքի
պատմութեան: Առանձին հատորով լոյս տեսած կամ անտիպ մնացած իր գոր-
ծերէն մեզի ծանօթ են հետեւեալները.-



Գերապայծար Անդրեաս Աղեքսանդրեան

1- *Ճշմարտութիւն Կոստանդնուպոլսոյ Հռոմէական Հայոց Նախագահ Հասուն Գերապայտափն Հետ Սենեցած Դատին Վրայօք*, Կ. Պոլիս, Տպարան Յովհաննէս Միւհէնտիսեանի, 1853, 36 էջ⁹:

2- *Պատասխանի Առ Բան Ինչ Տետրակին Անուանելոյ «Ճշմարտութիւն Կոստանդնուպոլսոյ Հռոմէական Հայոց Նախագահ Հասուն Գերապայտափն Հետ Սենեցած Դատին Վրայօք»*, Կ. Պոլիս, Ղալաթիա, Տպարան Սրբոյն Բենեդիկտոսի, 1854⁷:

3- *«Պատմութիւն Մայրաքաղաքին Բերիոյ»*, ձեռագիր, 1861, 151 էջ. Չմմառու հայերէն նոր ձեռագիրներու հաւաքածոյ, թիւ 398 (հին թիւ՝ 663):

4- *Notes sur la Mission Arménienne Catholique de Mélite (Arménie Mineure)*, Համ, 1870:

5- *Համառու Պատմութիւն Երկոտասան Կաթողիկոսաց Կիլիկիոյ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1906, 70 էջ:

6- *Համառու Պատմութիւն Եպիսկոպոսական Աթոռոց Ի Պատրիարքութեան Կիլիկիոյ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1906, 49 էջ:

7- *Histoire Abrégée des Sièges Archiépiscopaux et Episcopaux du Patriarcat de Cilicie*, Պէյրուս, 1908: Նախորդ գիրքին ֆրանսերէն թարգմանութիւնն է:

8- *Պատմութիւն Աղանաւոր Բաղաքին Սերաստիոյ Եւ Սահմանաց Նորա Կամ Արքեպիսկոպոսութեան Նորին*, Վենետիկ, Ս. Ղազար, 1911, 414 էջ:

9- *«Արրահամ Կաթողիկոսի Վարքը»*, ձեռագիր, Չմմառու հայերէն նոր ձեռագիրներու հաւաքածոյ, թիւ 709⁸:

10- Բանասէր Դոկտ. Յակոբ Թօփճեան, իր մէկ ուսումնասիրութեան մէջ⁹ ընդարձակ մէջբերում մը կատարած է լիբանանահայ գաղութի մասին Չմմառու Վանքի թիւ 669 ձեռագիրէն, որուն որպէս հեղինակ կը յիշէ Գերապայտափն Անդրէաս Աղեքսանդրեանը: Երբեք ձեռագիրը մենք չկրցանք գտնել Չմմառու Վանքի ձեռագրաց տպագիր ցուցակին մէջ, որ ունի 422 ձեռագիրներու նկարագրութիւն միայն (Չմմառու ձեռագիրներու Բ. հատորը յատկացուած է աւելի ետք Պոլիսէն բերուած Անտոնեան Միարանութեան հաւաքածոյի ձեռագիրներուն, ուր բնականաբար, չէր կրնար տեղ գտնել Աղեքսանդրեանի յիշեալ ձեռագիրը): Աղեքսանդրեանի այս գործը հաւանաբար այժմ մաս կը կազմէ վերել յիշատակուած Չմմառու նոր ձեռագիրներու հաւաքածոյին: Ըստ երեւոյթին, ան Սուրիոյ (եւ Լիբանանի) հայկական գաղթօճախի պատմութեան նուիրուած ուսումնասիրութիւն մըն է:

11- Կը յիշուի, որ «ունի նաեւ շատ մը անտիպ գործեր», որոնցմէ է «Մանօթութիւն Մեյիտինիոյ Առաքելութեան» ուսումնասիրական աշխատասիրութիւնը¹⁰, որ փստահարար վերել յիշուած չորրորդ գիրքին հայերէն տարբերակն է:

12- Կ'ըսուի նաեւ, թէ ունի «ջատագովական գրքոյկներ ի պաշտպանութիւն ուղղափառ վարդապետութեան եկեղեցոյ եւ գերիշխանութեան Գահին Հոռմայ»¹¹,

Բացի վերոյիշեալ գիրքերէն, ան հաւանաբար ունի ձեռագիր այլ աշխատութիւններ եւս, որոնք անձանօթ կը մնան ցարդ:

Գեր-Աղեքսանդրեանի մասին զմմառեան Յովսէփ վրդ. Քաջունի հրատարակած է կենսագրական բնոյթի հատորիկ մը՝ «Կենսագրութիւն Գեր-Անդրէաս Աղեքսանդրեանի» վերնագիրով¹⁹։

Աղեքսանդրեանի Պատմութիւն Մայրաքաղաքին Բերիոյ աշխատութիւնը կը բաղկանայ 151 ձեռագիր էջերէ։ Գիրքին բնագիրը գրուած է գեղեցիկ նոսր գիրով, յառաջարանը՝ բոլորգիրով, իսկ գիրքին լուսանցքներուն եղած յաւելումներն ու վերջաւորութեան անոր կցուած յաւելուածական էջերը՝ շեղագիրով։ Էջ 130էն ետք էջերը չեն համարակարուած։ Ծաւալը՝ 13X20,8 սմ. է։

Գիրքը գրուած է գրարար, իսկ աւելի ետք կատարուած յաւելումները՝ մասամբ աշխարհարար։ Անուանաթերթին վրայ կը կարդանք.

«ՊԱՏՄՈՒԹՒԻՒՆ/ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ/ԲԵՐԻՈՅ/ՅՕՐԻՆԵԱԳ/ՏԵՐ ԱՆԴՐԵԱՍ Գ./աղեքսանդրե[ա]ն/ՄԻԱԲԱՆ. Կ[Ա]Թ[ՈՂԻԿԷ]./ՌՅԺ * 1861»։

Ամբողջ անուանաթերթը առնուած է ծաղիկներով զարդարուած գեղեցիկ շրջանակի մէջ։

Ստորեւ՝ Աղեքսանդրեանի Պատմութիւն Մայրաքաղաքին Բերիոյ աշխատութեան զմմառեան ձեռագիրին մանրամասն նկարագրութիւնը՝ էջ առ էջ, նշելով բոլոր ենթավերնագիրները, ինչպէս նաեւ անոր կցուած սեւագիր-չմաքրագրուած այլեւայլ նիւթերը.

* էջ 1 Անուանաթերթ։

* էջ 2-4 Դատարկ։

* էջ 5-9 «Յառաջարան» (ամբողջութիւնը՝ ստորեւ-Մ.Մ.)։

* էջ 10-11 Ծանօթութիւններ՝ Հալէպի հիմնադրութեան եւ տեղագրութեան մասին։

* էջ 12 Լենկ Թիմուրի արշաւանքներուն ու անոր կողմէ Հալէպի գրաւումին մասին։

* էջ 13 «Մասն Առաջին-Քաղաքական վէպք Բերիոյ» (միայն խորագիր) եւ շրջանի քարտէսը։

* էջ 14 Դատարկ։

* էջ 15 «Գլուխ Ա տեղագրութիւն»։

* էջ 15-18 «Յօդուած Ա. երկրագրութիւն» աշխարհին ասորւոց»։ Աշխարհագրական տեղեկութիւններ։ Ծրջանը բաժնած է 5 մասերու, որոնցմէ իւրաքանչիւրին մասին կը խօսի առանձինն.

1- Պաղեստին։

2- Ստորին Ասորիք կամ Կելէսիւրիա։

3- Փիւնիկէ։

4- Բնիկն կամ Անտիոքեան Ասորիք։

5- Եփրատիա կամ Գոմաղենի, որ եւ վերին Ասորիք անուանի։

* էջ 18-20 «Յօդուած Բ. տեղագիր Բերիոյ եւ զանազան անուանք ն[ո]ր[ա]»։ Տրուած է Հալէպի աշխարհագրական դիրքը, անուան ստուգաբանութեան հետ կապուած զանազան վարկածներ, ընդ որում՝ «Հալապ ալ Ծահպա'ա»ի ծանօթ աւանդութիւնը²⁰։

ԳԵՏԱՌԻՒ
ԼՅՅԱԿԱՆԱԿԱԿԱԼ

Ի Կ. Պ. Պ.

Ի Կ. Պ. Պ.

Տեղ. Կ. Պ. Պ. Պ. Պ.

Կ. Պ. Պ. Պ. Պ. Պ.

Կ. Պ. Պ.

մ. թ. 1869

Գիրքին անուանաբերը

- * էջ 21 «Գլուխ Բ. պատմական անցք»: Հալչպի հիմնադրութեան քանի մը հաւանական վարկածներու յիշատակում:
- * էջ 22-28 «Յօդուած Ա. Երեւելի դէպք Բերիոյ 'ի նորոգութեան» է ն[ո]ր[ա] մինչեւ ցլինելն ը[նդ] ինքնուրոյն պետօք. 311 ն[ա]խ[ը]ք[ան] զՔ[րիստո]ս ցամ Տ[եառ]ն 990 միջոց 1301 ամաց»: Ժամանակագրութեան ձեւով Հալչպի պատմութիւն՝ 311 Ք.ա.-974 Ք.ե. (Հատուածներ՝ ստորել-Մ.Մ.):
- * էջ 29-42 «Յօդուած Բ. Ինքնիշխան պետք Բերիոյ որք Սուլթանքն եւ Ամիրապետք անուանէին. մինչեւ ցարչաւանս թաթարաց. 990-1250 * 260. [ամաց]»: Ժամանակագրութեան ձեւով Հալչպի պատմութիւն՝ 990-1228թ. (Հատուած մը՝ ստորել-Մ.Մ.):
- * էջ 42-48 «Յօդուած Գ. Արչաւանք թաթարաց, մինչեւ ցտիրապետել օսմանեանց. 1250-1517+267 [ամաց]»: Ժամանակագրութեան ձեւով Հալչպի պատմութիւն՝ 1257-1517 թ. (Հատուածներ՝ ստորել-Մ.Մ.):
- * էջ 49-58 «Յօդուած Դ. Առումն Բերիոյ յօմանե[ա]նց. եւ որ ինչ յետ ալ նորիկ վէպք. 1517-1861+334 [ամաց]»: Ժամանակագրութեան ձեւով Հալչպի պատմութիւն՝ 1516-1861թ. (Հատուած մը՝ ստորել-Մ.Մ.):
- * էջ 59-68 «Գլուխ Գ Գիտելիք զկնի օսմանեանցն տիրապետութեան»:
- էջ 59-60 «Յօդուած Ա. տարածութիւն» եւ սահմանք կուսակալութեան Բերիոյ»:
 - էջ 60-63 «Յօդուած Բ. Քաղաքական եւ կրօնական տեսչութիւն» օսմանեանց 'ի Բերիա»:
 - էջ 63-64 «Յօդուած Գ. Վաճառականութիւն»:
 - էջ 65-68 «Յօդուած Դ. Ստորագրութիւն Բերիոյ»: Աւարտին՝ մարդահամար Հալչպի բնակչութեան, ուր առաքելական հայերը ցոյց կը տրուին իբր 2,000 իսկ կաթողիկէ հայերը՝ 3,500:
- * էջ 69 մարդահամար՝ Հալչպի եւ Դամասկոսի բնակչութեանց. Դամասկոսի հայ առաքելականներն ու քաղղէացիները միասնաբար ցոյց կը տրուին իբր 405 անձ, իսկ կաթողիկէ հայերը՝ 235:
- * էջ 70 մարդահամար՝ Ասորիքի եւ Հալչպի բնակչութեանց. Ասորիքի ամբողջ բնակչութիւնը ցոյց կը տրուի որպէս 2,030,000, որուն 180,000ը՝ հրեայ, հայ եւ նեստորական՝ միասին:
- * էջ 71-72 «Մասն երկրորդ եկեղեցական պատմութիւն» Բերիոյ: Թէեւ տրուած է այս վերնագիրը, բայց կը խօսուի այլ նիւթերու մասին, ինչպէս՝ Սարբեան աղանդի, եւն.: էջ 71 կողմնակի՝ մարդահամար Դամասկոսի բնակչութեան:
- * էջ 73 «Մասն երկրորդ եկեղեցական պատմութիւն» Բերիոյ:
- * էջ 74-75 «Գլուխ Ա Մագումն լուսոյ աւետարանին 'ի Բերիա»:
- * էջ 76-86 «Գլուխ Բ Նախնի եպիսկոպոսութիւնք Բերիոյ 280-600+320 [ամաց]»: Առանձին-առանձին կը խօսուի Հալչպի 11 եպիսկոպոսներուն մասին (Հատուած մը՝ ստորել-Մ.Մ.):

* էջ 87-88 «Գլուխ Գ Բազմանալ եպիսկոպոսարանաց՝ի Բերիա ընդ] ալլ եւ ալլ ազգաց 600-1860+1260 [ամաց]»:

* էջ 89-90 «Յօդուած Ա. Նախնի եպիսկոպոսունք Ասորուց 644-1640+996 [ամաց]»: Հալէպի ասորի 10 առաջնորդներու անուան յիշատակութիւն:

* էջ 90-97 «Յօդուած Բ. Ասորի պատրիարքունք եւ արքեպիսկոպոսունք Բերիոյ. 1640-1860+220 [ամաց]»: Ամփոփ տեղեկութիւններ՝ Հալէպի ասորի 7 առաջնորդներու մասին:

* էջ 97-101 «Յօդուած Գ. եպիսկոպոսունք Յունաց 900-1860+880 [ամաց]»: Ամփոփ տեղեկութիւններ՝ Հալէպի յոյն 7 առաջնորդներու մասին, որոնց մէկ ետք անունով միայն յիշատակուած են նաեւ անոնց յաջորդները:

* էջ 101-104 «Յօդուած չորրորդ եպիսկոպոսունք Մարոնեաց. 1650-1861+211 [ամաց]»: Ամփոփ տեղեկութիւններ՝ Հալէպի մարոնիթ 10 առաջնորդներու մասին:

* էջ 105 «Գլուխ Դ Բնակութիւն] Հայոց՝ի Բերիա եւ ազգային եպ[ի]ս[կ]ոպոսունք 1000-1861+861 [ամաց]» (ամբողջութիւնը՝ ստորեւ- Մ.Մ.):

* էջ 106-111¹⁴ «Յօդուած Ա. Նախնի եպիսկոպոսունք Բերիոյ Հայոց 1430-1710+280 [ամաց]»: Ամփոփ տեղեկութիւններ՝ Հալէպի հայ 6 առաջնորդներու մասին (ամբողջութիւնը՝ ստորեւ- Մ.Մ.):

* էջ 111-115 «Յօդուած Բ. Արրահամ Ա. 1710-1740+30 [ամաց]»: Կենսագրութիւն՝ Արրահամ Արծիւեանի:

* էջ 116-122 «Յօդուած Գ. Յաղագս յաջորդաց Արրահամու Արքեպ[ի]սկոպոսի մինչեւ ցայսօր. 1740-1861+121 [ամաց]»: Արրահամ Արծիւեանի յաջորդած Հալէպի հայ կաթողիկէ 7 առաջնորդներու կենսագրականները:

* էջ 122-124 «Կուսակալք Հալէպի»՝ 1585-1691 թ.: էջերը շրջուած են: Սկիզբը՝ էջ 132, յետոյ՝ 133, 131, 130, հուսկ՝ 124-123-122: Հալէպի կուսակալներու ժամանակագրութիւնն է՝ գործունէութեան համառօտ ուրուագիծով: Փրելէ ետք բոլորին վրայ գիծ քաշուած-սրբուած է: Ընդօրինակուած է շեղագիր՝ գիրքին գանազան բաժիններուն մէջ եղած յաւելումներուն ձեռագիրով: Այս գլուխը տեղ չէ գտած գիրքին բուն բնագիրին մէջ:

* էջ 125-130 «Յանկ»:

* էջ 130-133 «Կուսակալք Հալէպի»ի շարունակութիւն: Տե՛ս վերեւ՝ էջ 122-124:

* էջ 134 «Բնակիչք Եւրոպական Տաճկաստանի»: Մարդահամար, ուր հայոց թիւը ցոյց կը տրուի իբր 400,000:

* էջ 135 «Հալէպ-պատմութիւն]»: Ուրուագիծ՝ Հալէպի պատմութեան:

* էջ 136-137 մարդահամար՝ Օսմեանեան կայսրութեան ազգաբնակչութեան:

- «Ըս[տ] հաշւոյ Աղեքսանդրեանի»՝ հայոց թիւը ցոյց կը տրուի 2,400,000:
- «Ասիական Տաճկաստանի» (Ասորիք, Միջագետք, Քիւրտիստան եւ Յուդայաստան) բնակչութիւնը կը յիշուի որպէս 16,050,000, ընդ որում հայերը՝ 2,000,000:

* էջ 138-139 Ասորիքի եւ Պաղեստինի պատմութեանց ամփոփ ժամանակագրութիւն՝ Բ.ա. 1920-Բ.Ե. 1841:

* էջ 139 Մարդահամարներ՝ «Երկրին Ասորւոց», «Եւրոպական Տաճկաստան»ի, և.ն.:

* էջ 140 Ուրուագիծ՝ Հալէպի պատմութեան, եւ մանաւանդ՝ որպէս եկեղեցական թեմ:

* էջ 141 Պատմական դէպքերու ամփոփ ժամանակագրութիւն՝ 1288-1517թ.:

* էջ 142-145 (յաջորդականութեամբ՝ էջ 145-142-143-144) Հալէպի հայ կաթողիկոսացի առաջնորդ՝ Գրիգորիոս Վրդ. Պալիթեանի կոնդակը՝ ուղղուած Հալէպի թեմի իր գաւազներուն, գրուած՝ իր եպիսկոպոսական օժման առիթով (Փետրուար 1861), տրուած՝ Չմմառու Վանքէն (թարգմանուած՝ արարելէն):

* էջ 146 Դատարկ:

* էջ 147-148 Ասորիքի եւ Պաղեստինի պատմութեան ժամանակագրութիւն (300 Բ.ա.-1400), ամփոփուած հաւանաբար Ատորֆ Ժանի եւ Էմիլ Իսամպէռի Ճանապարհորդութիւն Վրեւելս (1861-1862) Ֆրանսերէն գիրքէն:

* էջ 149-150 Սուլթան Սուլէյման Բ. Քանունիի Հալէպ մուտքին (1549), մարտնիթներու ներկայացուցիչին հետ անոր հանդիպումին, ինչպէս նաեւ խաչակիրներու գործունէութեան մասին:

* էջ 150 «Բնակիչք Եգիպտոսի»: Մարդահամար, ուր «Արեւելեայք» (ասորիք, յոյնք, հայք, և.ն.) միասնաբար ցոյց կը տրուին որպէս 10,000:

* էջ 151 «Էյուպե[ա]ն Տոհմ»: Էյուպեաններու պատմութեան ժամանակագրութիւն (1181-1260):

Միշտ չէ որ Աղեքսանդրեանի տեղեկութիւնները ստոյգ են ու կը համապատասխանեն իրականութեան: Կան շփոթներ թուականի, եւ սխալներ՝ անունի: Օրինակ, իր յիշած (էջ 55-56) Հալէպի 101 օրեայ ժողովրդային ապստամբութիւնը պատահած է 1819-1820ին եւ ոչ թէ՛ 1816ին, իսկ այդ ապստամբութիւնը ճնշող թուրք կուսակալը կը կոչուի Խորշիտ փաշա եւ ոչ թէ՛ Ճալալուտտին փաշա, որ Խորշիտին օգնութեան փութացող կուսակալ մըն էր միայն եւ ոչ թէ՛ ապստամբութիւնը ճնշող օսմանեան բանակին գլխաւոր հրամանատարը: Կը յիշուի որ վերոյիշեալ Ճապան Չատէ Ճալալուտտին փաշան, որ նախապէս եղած էր Հալէպի կուսակալ, 1813ին յաջողած էր սպաննել 18 ենիչերի մեծաւորներ ու քաղաքը փրկել անոնց շահատակութիւններէն: Ըստ երեւոյթին, Աղեքսանդրեան շփոթած է թուականով իրարու այնքան մօտ երկու դէպքեր ու դէմքեր:

Տանք թուականի սխալի երկրորդ օրինակ մը. Հալէպի քրիստոնեաներուն դէմ տեղի ունեցած հարձանքն ու կողոպուտը (էջ 57-58) սկսած են 18 Հոկտեմբեր 1850ին եւ ոչ թէ՛ 1851ին, ինչպէս կը ներկայացնէ Աղեքսանդրեան:

Այս եւ նմանօրինակ այլ սխալները, սակայն չեն նսեմացներ գործին արժեքը՝ եթէ նկատի ունենանք գիրքին հեղինակման թուականը ու այդ օրերուն մասնագիտական գրականութեան ընդհանուր վիճակն ու սակաւութիւնը¹⁵։

Աղեքսանդրեան իր գիրքին մէջ չէ կրցած հեռու մնալ ժամանակին յատուկ դաւանական մտնեանդութենէն եւ յաճախ հարցերուն մօտեցած է կաթողիկէ եկեղեցականի գիրքէն մեկնելով, եւ ոչ թէ՛ անաչառ բանասէրի Արդարեւ, ան Բերիոյ (Հալէպի) հայոց առաջնորդներուն նուիրուած գլուխին մէջ, տուած է իրեն ծանօթ առաջնորդներուն կենսագրականները՝ հասնելով մինչեւ Յակոբ վարդապետ, որմէ ետք ան անմիջապէս յիշած է Արրահամ Արծիւեանը ու ապա՝ անոր յաջորդող հայ կաթողիկէ առաջնորդները, ընթերցողին մօտ ստեղծելով այն թիւր տպաւորութիւնը, իբր Արծիւեանով սկսող հայ կաթողիկէ առաջնորդներու շարքը շարունակութիւնն է Բերիոյ հայոց դարաւոր առաջնորդական գաւազանին։

Հեղինակը իր ձեռագիրին վրայ, զանազան ժամանակներու, ընդհուպ մինչեւ 1884, կատարած է բազմաթիւ յաւելումներ եւ սրբագրութիւններ։ Այդ յաւելումները - ինչպէս օրինակ՝ «Կուսակալք Հալէպի» գլուխը եւ մարդահամարները - չեն ներմուծուած բուն գործին մէջ։ Պիտի ենթադրել, որ հեղինակը մտադրած էր աւելի ետք յաւելումները կցել բուն գործին ու մաքրագրել զայն, բան մը, որ բոտ երեւոյթին, առիթ չէ ունեցած իրագործելու։

Աղեքսանդրեանի գիրքին հեղինակումէն՝ 1881էն մինչեւ այսօր, Հալէպի եւ Հալէպահայութեան մասին լոյս տեսած են բազմաթիւ ուսումնասիրութիւններ։ Ուստի, ի՞նչ նորութիւն կրնայ բերել այս գիրքը ու ի՞նչ կրնայ աւելցնել ան՝ եղածներուն վրայ։

Պարզ է, որ այս գիրքին պիտի մօտենայ նախ իր հեղինակման թուականը նկատի ունենալով։ Այդ առումով, ան մեզի կը ներկայանայ որպէս Հալէպի պատմութեան վերաբերեալ առաջին գիրքը հայ իրականութեան մէջ։ Ասոր է որ յաջորդեցին միւսները։ Առաջնեկութեան պատիւն է ուրեմն Աղեքսանդրեանի գիրքին մեծագոյն արժանիքը։

Միւս կողմէն, հեռաւոր այդ օրերուն, երբ բազմաթիւ մեծ ու հայաշատ այլ քաղաքներ չունէին (եւ երբեմն նաեւ չունին) իրենց պատմութեան նուիրուած առանձին հատորներ, այս գիրքը եղաւ հայկական գաղթօճախներու պատմութեան նուիրուած առաջին լուրջ ձեռնարկներէն մէկը։

Աղեքսանդրեանի գիրքը իր հետ կը բերէ նաեւ հաճելի նորութիւն մը։ Արտաւազդ Արք. Միւրմէեանի Պատմութիւն Հալէպի Հայոց¹⁶ ստուարածաւալ հատորը Հալէպի առաջնորդներու գաւազանին մէջ 1677-1700ի միջեւ ունի 23 տարիներու բաց մը, մինչ Աղեքսանդրեան նոյն շրջանէն կու տայ Հալէպի առաջնորդի մը անունը՝ Յակոբ եպիսկոպոս, յիշուած՝ 1693ին։

Հայագիտութեան համար արժէքաւոր են ու նորութիւն միանգամայն՝ Հալէպի հին շրջանի պատմութեան նուիրուած գիրքին այն բաժինները, որոնք առաւել կամ նուազ չափով կ'առնչուին հայութեան։ Հալէպահայ գաղթօճախի պատմութեամբ զբաղած բանասէրներ յաճախ լուռ անցած են այստեղ նկա-

րագրուած դէպքերուն եւ դէմքերուն վրայէն, այնպէս որ Աղեքսանդրեանի տեղեկութիւնները մեզի կը ներկայանան որպէս անոնց նուիրուած եզակի վկայութիւններ:

Յատկանշական է նաեւ այն, որ հարուստ է Աղեքսանդրեանի օգտագործած աղբիւրացանկը: Ան իր գործի տարբեր գլուխներուն մէջ յիշած է բազմաթիւ հեղինակներ ու գիրքեր, ընդհանուրը՝ 49 գիրք ու հեղինակ¹¹: Ինչպէս պիտի նկատէ ընթերցողը, անոնք մեծ մասամբ հին շրջանի օտար մատենագիրներ են՝ յոյն, լատին եւ ասորի: Կան նաեւ ուշ ժամանակի եւրոպացի հեղինակներու եւ ճանապարհորդներու գործեր եւս: Քիչ օգտագործուած են մանաւանդ արաբական աղբիւրները, թերեւս այն պատճառով, որ անոնք այդ ժամանակ մեծ մասամբ անտիպ վիճակի մէջ էին տակաւին եւ հետեւաբար, ոչ հասանելի՝ հեղինակին:

Անկախ իր պատմագիտական արժէքէն, եւ հակառակ իր կարգ մը թերիններուն ու բացթողումներուն, Գերապայծառ Աղեքսանդրեանի «Պատմութիւն Մայրաքաղաքին Բերիոյ» աշխատասիրութիւնը հայ պատմագրութեան մէջ կը մնայ որպէս եզակի ու գեղեցիկ նմոյշ՝ հինաւուրց Հալէպ քաղաքի մասին գրուած բազմաթիւ գիրքերուն ու յօդուածներուն կողքին, եւ որքան ալ իր տեղեկութիւնները այսօրուան գրութեամբ մասամբ ծանօթ ըլլան, բայց եւ այնպէս, երեւի արժէ մտածել զայն առանձին գրքոյկով մը հրատարակելու մասին:

Ստորեւ, ընտրաբար, կու տանք որոշ հատուածներ Պատմութիւն Մայրաքաղաքին Բերիոյ գիրքէն: Ընտրած ենք առաւելաբար հայութիւնը շահագրգռող էջերը: Անոնք այսքանով չեն սահմանափակուիր անշուշտ:

1. [Էջ 5] Յառաջարան

Սակաւք ապարէն մնացին ՚ի վաղեմի հոյակապ քաղաքաց արեւելեան աշխարհաց կանգունք, եւ սակաւագոյնք ՚ի նոսա պահեցին առաւել կամ նուազ՝ գնախնական իրեանց մեծութիւն եւ զփառս, յորս արդարեւ զառաջին տեղին ունի Բերիա քաղաք, որ թէւ էանց ընդ փորձ աղետից յարշաւանաց բարբարոսաց, եւ յահագին սասանութեանց եւ յայլոց արկածից. սակայն եւ այնպէս՝ զամ քան զգամ յառաջադեմն եղեւ քաղաքական եւ եկեղեցական պայծառութեամբ եւ յամենայն արդի աշխարհագրաց համարի մայրաքաղաք Ասիական Տաճկաստանի եւ հինգերորդ քաղաք բովանդակ օսմանեան լայնածաւալ ինքնակալութեան:

Բանգի յետ անշքանալոյ մեծակառոյց եւ ականաւոր քաղաքացն արեւելից, եւ իսպառ կործանել[Էջ 6]ոյ յայլոց բազմաց, Բերիա՝ գեղեցիկ եւ յարմար դրիքն բարգաւաճեալ ծաղկեցաւ ցանգ:

Եւ որ ինչ միանգամ բանք զովեստից լինին ՚ի մատենագիրս զլայնածաւալ տարածութենէ նորա, զգեղեցկութենէ բազմաճոյ պարտիզացն, զհոյակապ շինուածոցն, զմեծափարթամ ճոխութենէն, զբազմամբոյս բնակացն, եւ ՚ի վեր քան զամենայն զշահաւտն ազգի մարդկան գնորա բարգաւաճ շահափաճառութենէն ամենայնքն առաւելութեամբ յարմարին սերկեանս Բերիոյ,

մանաւանդ յետ կարգաւոր երթեւեկութեան շոգեվար նաւուց եւրոպեան ազանց ի կրկին նախահանգիստս նորա ի Լատդիկէ եւ ի փոքրն Աղեքսանդրիա:

Պանծալի եկաց Բերիա ըստ եկեղեցականին՝ մանաւանդ յետ հնգետասան դարուն, յորում այլ եկեղեցիք արեւելից՝ ըստ քաղաքականին, խորթնացեալ էին ի նախկին պայծառութենէ ուղղափառ կրօնից, զարթնոյր ի նմա վերստին լոյս իմաստութեան բանին կե[ւջ 7]նաց եւ արծարծանէր ուղղափառութիւն յականաւոր ազինս արեւելից ի ձեռն երեւելի արանց, յորս պանծալի եւ գերազանց եկաց երիցս երանեալ հայրն մեր Աբրահամ որ եւ Պետրոս Ա.:

Աստի յայսմանէ՝ եւ յորդորեալ յոմանց ի մտերիմ բարեկամաց՝ իղծ եղեւ մեզ աւանդել սակաւոր զվէպս մեծի քաղաքիս:

Եւ զի չունէաք զոր մեզ առաջնորդ՝ որ ոճով գրեալ իցէ զքաղաքէս, յայն սակս դեգերեալ ի բազում մատեանս հին եւ նոր հեղինակաց, ճշդիս գտակաւ կարգաւորեալ յօրինեցաք զպատմութիւնս, այլ բազմօք տաժանեալ ի զիտ ժամանակագրութեան, զոր եւ նշանակեցաք ի լուսանցսն ի դիւր ընթերցանելեաց:

Մեծապէս փոյթ կալաք յայս զործ շխառնել իւիք զքաղաքականն ընդ եկեղեցականին, զի մի շփոթ լիցին կարգ իրացն:

Յայն սակս բաժանեցաք զպատմութիւնս [ւջ 8]թիւնս ի կրկին մասունս, ի քաղաքական եւ յեկեղեցական:

Յառաջնումն կարգելով նախ զհամառօտ երկրագրութիւն աշխարհին Ասորոց, զտեղագիր եւ զանուանս Բերիոյ, ապա ի քառեակ յօդուածս աւանդելով զքաղաքական վէպս նորին 2126 ամաց, սկսեալ յամէ աշխարհի ըստ ժամանակագրաց 3693 ցամն 5819, ի վերջոյ տալով զհամառօտ տեղեկութիւնս ինչ զսահմանաց կուսակալութեանն զկառավարութենէ, զվաճառականութենէ եւ զստորագրութենէ քաղաքիս:

Ձերկրորդ մասն տրոհեցաք ի չորս գլուխ, յերեսին առաջինսն խօսելով զծագմանէ լուսոյ աւետարանին, զնախնի եպիսկոպոսաց եւ մետրապօլտաց, եւ զբազմանալոյ եպիսկոպոսարանաց ըստ այլ եւ այլ ազ[ւջ 9]գաց բնակելոց ի նմա:

Իսկ ի չորրորդ գլուխն փոյթ կալաք զրել զազգէս հայոց եւ զազգային եկեղեցոյ յերիս յօդուածս բանից:

Քաջայոյս եմք, եթէ ոչ անախորժ ընծայեսցի մեծարգոյ եւ իմաստուն ընթերցանելեաց վէպ այնքանոյ հոյակապ քաղաքին, մանաւանդ քեզ՝ ո Արիւապաի Գերապայծառ Տէր Գրիգորիոս Արքեպիսկոպոս¹⁸, լսել զպատմութիւն վիճակիդ որում նուիրեալն է դուզնաբնայս երկասիրութիւն, զոր եւ աղաչեմ ընդունել հաճութեամբ սրտի իբրեւ զփոքր ընծայ նուէր առ յինէն ի վայելումն Քեզ եւ Աստուածատէր Հօտիդ:

Անդ. Գ. քինյ. Աղեքսանդրեան

[Էջ 23] 61 [Բ.ա.] Յետ մահուան Անտիոքոսի բարձաւ իսպառ թագաւորութիւնն սելեւկեանց եւ Ասորիք մարզ եկաց Հռովմէական ինքնակալութիւնն, բայց հայր եւ պարսկք միաբա[Էջ 24]նութեամբ սկսան վիճել ընդ հռովմայեցոց վ[ա]ս[ն]ն իշխանութեան երկրին Ասորոց: Մեծն Տիգրան անցե[ա]լ ի գլուխ արիագունդ բանակին իւրոյ եհան վանե[ա]յց գԳարիանոս հռովմայեցոց զօրավար, եւ նիգակակցութեամբ ընդ պարսից զօր սաստիկ յարուցեալ առաքեաց յԱսորիս ը[նդ] սպարապետութեամբ Բարզափրայ Ռշտունոյ, որոյ վանեալ զհակառակորդս կալաւ զերկիրն Ասորոց լրին իւրով: Ի դառնալ ն[ո]ր[ա]յ յետս՝ զօրացան հռովմայեցիք ի վ[ե]ր[ա]յ Բակուրայ որդոյ արքային պարսից, եւ յետ մարտից պատերազմաց բազմաց յորում մերք մի կողմն եւ մերք միս կողմն յաղթող հանդիսանայր, հուսկ ուրեմն հռովմայեցիք կացին տեարք աշխարհին կարգեալ ի նմա կուսակալ զմի ոմն յաւագաց իրեանց, եւ մնաց Ասորիք ը[նդ] հռովմայեցուք, եւ ապա ը[նդ] բիզանդեան կայսերօք զամս 660, սող ինչ աւելի: Յայս միջոց ժամանակի բազում անգամ խորտեցան պարսք յայլ ոչ ինչ կարացին վճարել:

Այս հատուածի լուսանցքին վրայ հեղինակը աւելի ետք աւելցուցած է հետեւեալ տողերը՝ «Յուլիան յարշաւել իւր[ու]ն ի Պարս եկաց ի Բերիա եւ անչորսաւ ի վ[ե]ր[ա]յ թշնամե[ա]յց»:

[Էջ 28] 974 [թուական] Յովհաննէս Չմշկիկ Հայկազն կայսր յունաց ձեռն[ա]նութեամբ տասն հազար սպառազէն զօրացն հայոց առաքելոց առ յԱրքայէն հայոց յԱշոտոյ եհար զերկերիւր հազար արաբացիս առ Մամեստիա (Մսիս) քաղաքաւ եւ էառ զՏարսոն եւ զԱնտիոք: Իսկ Բերիա ինքնին երաց զդրունս իւր առաջի յաղթական ինքնակալին, որանօր գտին յոյնք զբազում զէնս եւ զմթերս համբարոյ, հազար չորեքհարիւր ջորիս, եւ երեք հարիւր պարկս ոսկոյ եւ արծաթոյ. Յովհաննէս կայսր զամս երիս դեգերե[ա]լ յԱսորիս նկուն արար զարաբացիս: Բայց ի դարձին իւրում մեռաւ թունով ի վատշուէրն Վասիլայ, վ[ա]սն որոյ եւ արաբացիք առ յաջորդովք առին դարձեալ զԲերիա եւ զայլ տեղիս, եւ հաստատեցին զսկուսակալս իրեանց:

[Էջ 35] 1169 [թուական] Ի մեռանել Թորոսի հայոց իշխանապետի, նիգակակից եղև եղբոր նորա Մլեհի (որ յաուրս իշխանութեան եղբոր իւրոյ զամս տասն նստէր ի Բերիա, եւ [Էջ 36] ի մեծի պատուի էր առ Նուրէտտինայ) եւ զինուր ձեռնատու եղև նմին՝ որովք զօրացեալ Մլեհի վանեաց զհակառակորդս իւր եւ կալաւ զիշխանապետութիւն հայոց, եւ զբաւեաց զբազում տեղիս ի ձեռաց լատին իշխանաց, որոց կարի իմն վշտացեալ ընդ այն դաշնադիր եղեն ընդ միմիանս, որոց գլուխ եկաց թագաւորն Երուսաղէմի Ալմերիկոս եւ յետ բազում պատգամաւորութեանց խաղացին ահեղ պատրաստութեամբ ի Կիլիկիա, վտանգ Մլեհի անհրաժեշտ էր, այլ վաղեմի դաշնակից եւ բարեկամ նորա Նուրէտտին յարձակեալ ասպատակաւ ի վերայ սահմանաց թագաւորին Երուսաղէմի ի նեղ էարկ զբազում ամրոցս աշխարհին պատնէշ պա-

շարմանք, եւ գրաւեաց ոչ սակաւ տեղիս, տազնապեալ լատինաց ընդ այն տեղի ետուն կորակոր ի Կիլիկիոյ:

4.

[Էջ 42] Յօդուած Գ. Արշաւանք քաթարաց, մինչեւ ցտիրապետել օսմանեանց. 1250-1517+267 [ամաց]:
Մէլէքնասիր Սուլդան

Թագաւորէր ապա ի Բերիա Մէլէքնասիր Սուլդան, մինչդեռ ի մեծ քարե-
զարդութեան] եւ յընդարձակածաւալ գօրութեան] էր Աթոռն: Այլ ոչ շատ
երկարեցին պաշարել զնա անհնարին աղէտք դառնութեան], որք դրդուեցին
զհիմունս զկրկնադարեւայն պետութեան]: Քանզի քաջն Հուլաուն եղբայր
եւ սպարապետ [էջ 43] Մանգոյ Խան ինքնակալին քաթարաց դիմեաց գօրու
ծանու ի վիւրայ] արարացոց եւ թուրքաց եւ յետ նուաճելոյ զամենայն] եր-
կիրն մինչեւ ցեփրատ եւ յետ առնոյ զԲարսիլոն (Բաղդադ), խաղաց ի Միջա-
զետս, եւ ի բուն առեալ զԵդեսիա, գոհր, դաղարեաց ի կողմանսն յայնոսիկ:
Եւ առաքեալ զաւետիս մեծամեծ յաղթութեանց իւրոց առ Հեթում Արքայ հա-
յոց՝ որ դաշնաւորն էր ընդ] քաթարս, հրաւիրեաց զնա զալ գօրօք եւ նիզակա-
կից լինել, ինքեան յառունս սրբոյ երկրին, անդէն եւ անդ գումարեւայ] զգօրս
իւր ի 40,000 հետեակաց եւ յ12,000 հեծելոց կուռ վառելոց եկն առ նա, կազ-
մեցաւ ատեան պատերազմի, եւ արքայն հայոց յորդոր եղեւ դիմել նախ ի
Բերիա՝ ասելով առ Հուլաուն, իշխանդ՝ ահա Սուլդանն Բերիոյ ունի ընդ] ձե-
ռամբ իւրով զամենայն] երկիրն Ասորոց յորում է եւ Երուսաղէմ քաղաք:
Վախնորոյ պէտք են նախ արկանել ի բուն զմայրաքաղաքն զԲերիա, եւ
այսպէս տէր եղիցիս երկրին Ասորոց. հաւանեալ սպարապետին քաթարաց
հրաման ետ պաշարել զԲերիա քաղաք, որ էր յոյժ անբացեալ պարսպօք,
քազմամբոյս եւ քազմահարուստ [էջ 44] սակայն Հուլաուն եւ արքայն հայոց
անվեհեր ի վիւրայ] յարձակեցան, եւ ականահատութեամբ], մերենայիւր
որ էշն կոչի, քարանօք, բողոտրովք, նետիւք, եւ այլ ազգի ազգի զինուք առին
զայն ի գլուխ ինն ատուրց, որ անառիկն թուէր, եւ զտին զանհնարին քազմու-
թիւն] զանծուց: Էր ի միջավայրի քաղաքին բերդ մի կոչեցեալ Տեմալեզաք,
որ յետ երկոտասան ատուրց առաւ ականահատութեամբ]: Եւ այսպէս ի բուն
անկաւ բոլոր քաղաքն Բերիա յամի 1259:

Յետ այսորիկ յաղթական բանակն միաբանեալ հետամուտ լեալ Սուլդա-
նին՝ խաղաց ի Դամասկոս եւ էառ զայն, կալաւ անդէն զկին եւ զորդիս Սուլ-
դանին, յայնժամ յանհնարս մտեալ Սուլդանին մատեաւ առ Հուլաուն եւ
խնդրէր ողորմիլ ինքեան՝ դարձուցանելով զկին եւ զորդիս իւր: Այլ ի դերեւ եւ
քանզի Հուլաուն եւ զնա ինքն ձերբակալ արարեալ՝ առաքեւայ] կնաւ եւ որդ-
ւով յաշխարհն պարսից, ուրայ] զի յանդորրու կացցեն Ասորիք: Այսոցիկ
այսպէս եղելոց Հուլաուն ետ արքային հայոց զմեծ մասն աւարին եւ զբազում
բերդորայս ի սահմանս քազաւորութեան] նոյր] ընդ] որս եւ զԲերիա [էջ
45] զորս արքայն ետ անբացուցանել ըստ] կամս իւր: Ետ Հուլաուն եւ դքսին
Անտիոքայ զբանի մի քաղաքս, ընդ] զի ազգական էր արքային հայոց: Իսկ ի

վ[ե]ր[այ] այլոց գաւառաց կացոյց կուսակալ զԿիպողա գորագումիս 20,000 գօրօք, զի զերկիրն Ասորոց պահեսցէ, եւ զի առեալ զԵրուսաղէմ դարձուցէ ի քրիստոնեայս, եւ ինքն դարձ արար յաշխարհ իւր վ[ա]ս[ն] մահու եղբօր իւրոյ Մանգոյի ինքնակալի, եւ այսպէս բարձաւ քազաւորութիւնն Բերիոյ տեսեալ ամս 905-1260+355 [ամաց] ը[նդ] այլ եւ այլ տոհմովք:

[Էջ 46] 1267 [թուական] Յետ ամաց՝ այն ինչ դադար առնոյր խազմն յերկիրն Ասորոց, անկաւ խռովութիւն մեծ ի բաբարս, եւ Արքային հայոց եարկ եղև ըս[տ] դաշինն ուխտի դիմել գօրօք անդր: Սուլդանն Եգիպտոսի՝ որ յանգ երկնէր ի միտս գրաւել եւ զայն մասն Ասորոց՝ որ մնացեալ էր ի ձեռս հայոց, եւ տարածել շահ իւր ի վ[ե]ր[այ] համօրէն ազգաց, զգացեալ զյուել Արքային [էջ 47] հայոց, առաքեաց բազմութեամբ գօրաց զՍմբլմոթ գօրավար ի վերայ հայոց: Արքայորդիքն Լեւոն եւ Թորոս գօրաժողով եղեալ ըս[տ] ձեռին բաւականի, ելին ընդէմ նորա, եւ թէպէտ բազում քաջութիւնս գործեցին, բայց ի վախճանի ընկճեալ ի բազմութենէ թշնամեաց Թորոս անկաւ ի մարտի անդ, եւ Լեւոն ի զերութիւն վարեցաւ: Ի դառնալ հօր նոցա յաշխարհէն բաբարաց իմացեալ զեղեալսն տրտմեցաւ յոյժ, եւ առաքեալ պատգամ առ սուլդանն Եգիպտոսի եւ խնդրեաց զորդի իւր: Եւ նա յանձն էառ կատարել զխնդիրն, եթէ Արքայն հայոց դարձուցէ առ ինքն զՏէմալեզաք ամրոց ի սահմանս Բերիոյ եւ զՍանկալասար զբարեկամ իւր, որ անկեալ էր ի ձեռս բաբարաց: Թագաւորն հայոց առ սէր որդոյն կատարեաց զխնդիր նորին, եւ այսպէս այնորիկ կողմանք յետ կալոյ զամս իբր 20 ը[նդ] իշխանութեամբ հայոց անկան դարձեալ ըն[դ] մասին ի ձեռս եգիպտացոց:

Այլ հայք աջակցութեամբ ընդ բաբարս՝ վիճեցան վ[ա]ս[ն] իշխանութեանն երկրին Ասորոց զամս բառասուն ահագին մարտիս պատերազմաց, յորս մերք մի կողմն եւ մերք միսն յաղթական հանդիսացեալ գրաւէին զաշխարհն: [Էջ 48] Բայց հուսկ ուրեմն ի պակասիլ ձեռընտուութեանն բաբարաց՝ միայնակ մնացեալ հայոց՝ ստիպեցան ամփոփել զձեռս իրեանց ի բոլորումն ասորոց, եւ պահ ունել բնիկ աշխարհին իրեանց Կիլիկիոյ՝ յորոյ վերայ ես սպառնայր զոռոզացեալ եգիպտացին: Յայնմ հետէ եգիպտացիք կացին տեարք Ասորոց աշխարհին եւ ի Բերիա կարգեցին կուսակալ մեծ ամիրայ անուանեալ:

1337 [թուական] Մին յամիրայիցս սպարապետ կացեալ Սուլդանէն բ[ա]զ[ու]մ վնասս հասոյց հայոց ասպատակութեամբ եւ աւարառութեամբ:

5.

[Էջ 57] 1851¹⁹ [թուական] Յետ տասն ամաց յարեան բնակիչք քաղաքիս, եւ յափշտակեալ զտունս եւ զեկեղեցիս քրիստոնէից հրոյ ճարակս ետուն զոմանս եւ ի նոցանէ, յորս երեւելի էր եկեղեցին Ասորոց մեծութեամբն եւ ճոխութեամբն, մանաւանդ մեծահոշակ նշանագործ պատկերաւ Տիրամօրն նկարեալ ի սրբոյն Ղուկայ, որ եւ հրոյ ճարակ եղև, նաեւ մահունք ո՛չ սակարգ գործեցան: Եւ ապա խաղացին յառումն Տէմալեզաքայ միջնաբերդի, եւ զին-

ուորանոցին, զաւուրս երիս մարտ եղեալ կռուեցան, այլ արիութեամբ զօրավարին եւ զօրաց օսմանեանց՝ որք շէին առաւել քան զուրք հարիւր, եւ ճարտարութեամբ Մուրատ Բաշայի, որ է մեծանունն Պէմ սպարապետ հունգարացւոց, նկուն եղեն ապստամբքն, եւ յաղթական զօրականին մտեալ ի թաղս տաճկաց բ[ա]զ[ու]մ նախնիս գործեցին եւ թաղքն Պանգուսա եւ Պապ Ներա[ւ]լ հրդեհեալ ատրեցան ի թնդանօթից բերդին: Գլխաւորք ապստամբութե[ա]ն առաքեցան յարսոբս, եւ բ[ա]զ[ու]մք գրեցան ի զինուորութի[ւ]ն: Հասն եւ այլ զօրք արքունի ի Դամասկոս եւ ի Կ. Պօլսոյ, այլ մինչ չեւ հասեալ խաղաղացեալ էր արդէն ամ[ենայն] ինչ: Արկաւ յիշխանութեն]է կուսակալն Բերիոյ, զի կասկածէր կամակցութե[ա]ն [էջ 58] առնն յիրողութեանս վ[ա]յս[ն] կարի իմն անփութութե[ա]ն: Եղեւ հատուցումն զրկելոցն եւ յափշտակելոց, բայց նուազ քան զտասներորդ մասն, այս ապստամբութի[ւ]ն տեւե[ա]ց զաւուրս ոթ եւ եթ, այլ զեան մեծ հասոյց բնակչաց քաղաքին, եթ տաճկաց, եւ եթ քրիստոնէից: Որով եւ նուազեցան բնակիչք քաղաքին: Բայց խնամօք օգոստափառ վերստին յարուցեալ կանգնեցաւ իբրեւ զառաջինն:

6.

Մ[ուր]քն Մելիտոս

[էջ 79] Ե.²⁰ Մ[ուր]քն Մելիտոս էր յազգէս ի Մելիտինեայ փոքուն հայոց, սա ինքն նախ ձեռնադրեցաւ յեպիսկոպոսութիւն Սերաստիոյ յորմէ ապա փոխադրեցաւ յԱթոն Բերիոյ՝ զոր կառավարեալ ամ[ենայն] իմաստութեամբ եւ սրբութեամբ զամս ինչ, զկնի ժողովոյն Մելեկիոյ յամի 361, փոխադ[էջ 80]րեցաւ ի պատրիարգական Աթոն Անտիոքայ, ո[ր]ա[յ]էս վկայէ Մոկրատ, զիբր Բ. զլ. 44:

7.

ԳԼՈՒԽ Գ

Բնակութի[ւ]ն հայոց ի Բերիա եւ ազգային եպ[ի]ս[կոպո]սունք 1000-1861+861 [ամաց]

[էջ 105] Կարի իմն հաւանական թուի, եթ բնակութիւն ազգիս ի Բերիա, սկսաւ ի մետասան դարուն: Տեսաք ի քաղաքական պատմութեան, եթ ոչ սակաւ ամս եկաց ընդ մերոցս իշխանութեամբ: Եւ հետզհետէ, առաւելաւ բազմութիւն նոցա անդ, մանաւանդ յետ կործանման հայկական ոտրենեան քաղաքութեան Կիլիկիոյ ի վերջկոյս ԺԴ դարուն, մինչեւ հասանել այսր հայ զաղթականութե[ա]ն ի թիւ իբր երկոտասան անձանց հազար, թեպէտ զարդիս կիսով չափ նուազեալ է այդ թիւ, եպիսկոպոսութի[ւ]ն ազգիս սկիզբն կալաւ ի ԺԴ դարուն՝ որ եւ տեւէ ցայսօր ժամանակի, զորմէ զրեսցուր յառաջիկայ երես յօդուածս:

Յովակիմ եպս.	1431
Ղազար եպս.	1585
Յովհաննէս եպս.	1586
Պետրոս Կարկառեցի Կթ. ամս է.	1602

Դաւիթ Ար. ամս Ը.	1663
Յակոբ եպս. (Աթոռ Ս. Պետ. եր[ես] 280)	1693
Արր[ա]հ[ա]մ Ա. ամս Լ.	1710

8.

Յօդուած Ա.

Նախնի եպիսկոպոսունք Բերիոյ հայոց 1430-1710+280 [ամաց]

Ա. Յովակիմ

[Էջ 106] Ի հայ եպիսկոպոսաց Բերիոյ առաջին յիշատակեալն ՚ի գիրս է Յովակիմ եպիսկոպոս, այր սիրող ճշմարտութեան եւ հետեւող ուղղափառութեան:

Յաւուրս եպիսկոպոսութեան սորին, եւ կաթողիկոսութեան Կոստանդեայ Ե. Վահկեցոյ գումարեցաւ յարեմուտս տիեզերական Սր. ժողովն ՚ի Փղորենախա Տուսկիոյ վ[ա]ս[ն] միաբանելոյ գոյնս ընդ եկեղեցոյն Հռովմայ, յամին 1431, հրաւեր առաքեաց սրբազան քահանայապետն՝ որ այն ինքն է Եղիմէոս Դ. եւ առ կաթողիկոսն Կոստանդին՝ ներկանալ սրբոյ ժողովոյն, ոչ կարացեալ անձամբ կատարել զխնդիր քահանայապետին: 1438, առաքեաց ՚ի դիմաց իւրոց զյիշատակեալոյ Յովակիմ եպիսկոպոս, ընդ Մարգիս, Մարտիրոս եւ Թովմաս վարդապետաց՝ երթալ վճարել զգործն Ա[ստուա]ծահաճոյ, եւ հաստատել զմիաբանութիւն եւ զսէր ընդ Հռովմայ [Էջ 107] եկեղեցոյն: Ելեալ չորից հրեշտակացս թղթով հայրապետին իրեանց հազիւ հասին ՚ի Փղորենախա զկնի սուարտելոյ ժողովոյն. եւ ներկայացեալ սրբազան քահանայապետին մատուցին ՚ի դիմաց կաթողիկոսի իրե[ա]նց եւ ազգի զհնազանդութիւն առ Ս[յուր]բ զահն, եւ մեծապատիւ մեծարեցան ՚ի նմանէ: Ապա առեալ զսահմանս ժողովոյն եւ զկոնդակս մեծ քահանայապետին դարձան յամի 1440 յաշխարհն իրեանց ուր գտին վախճանեալ զԿոստանդին Ե. նոյնպէս եւ զյաջորդ նորա Յովսէփ Գ. եւ նստէր յաթոռ հայրապետութեան Գրիգոր Թ. եւ յընթացից պատմութեան ազգիս յայտ է եթէ Գրիգոր կաթողիկոսն իրովքն ընկալաւ սիրով զսահմանս ժողովոյն սրբոյ, զորմէ չէ տեղոյս բննել: Յետ այնորիկ Յովակիմ եպիսկոպոս դարձաւ յԱթոռ իւր ՚ի Բերիա եւ հովուեաց զայն ցմահ իւր:

Չյաջորդաց սորին Յովակիմայ մինչեւ ցնատիլ Արրահամ արքեպիսկոպոսի չունիմք զլիուլի ծանօթութիւնս, այլ միայն զյիշատակս ոմանց մասնատորաց, զորոց զրեցուք համառօտի:

Տ[է]ր Ղազար²¹

Գտանի ստորագրու[թ]ի[ւն] սորա {գտանի} ՚ի դաւանու[թ]ե[ան] Ազարիա կ[ա]թ[ո]ղ[ի]կոսի յամի 1585:

Բ. Յովհաննէս²²

[Էջ 108] Ի վերջկոյս վեշտասան դարուն հովուէր զեկեղեցին Բերիոյ Յովհաննէս: Յաւուրս սորին եկն ՚ի Բերիա Ազարիա Կաթողիկոս եւ զրեաց թողթ

ուղիղ դաւանութեան առ սրբազան քահանայապետն Գրիգոր ԺԴ յամի 1584, եւ զի մինչ չեւ հասեալ թղթոյս վախճանեաց զկեանս իւր քահանայապետն, յամի 1586, ժողով արարեալ ի Բերիա վերստին գրեաց (գրեաց) կաթողիկոսն առ Քսեստոս Ե. թուրք սիրոյ եւ ուղղափառ դաւանութեան, յորում ստորագրեցին Յովհանն Ուլնիայ, Մարտիրոս Աշոցայ, Յովհանն կամ Յովհաննէս Բերիայ եւ Մինաս Սեբաստիայ ե[պիսկո]պ[ո]ս[ուն]ք: Յայսմ դաւանութեան յաղագս բղիճման հոգւոյն սրբոյ այսպէս գրէ. Հաւատամք բոլորով սրտիւ եւ խոստովանիմք բերանով թէ Հայր է անձնին, որդին ճնունդ եւ հոգին Ս[ուր]բ բղիճումն յախտենական ի Հօրէ եւ յորդոյ, ոչ թէ ո[ր]պ[է]ս յերկուց սկզբանց, այլ ի յերկուց որպէս ի մի սկզբ[ա]նէ եւ ի փշմանէ: Ըստ սմին օրինակի ուղղութեամբ դաւանէին եւ գերկուս բնութիւնս ի Զ[ր]իստոյս, եւ զայլ մասունս հաւատոյ: Ժողովեալքն առաքեցին զՅովհաննէս եպիսկոպոս Բերիայ տանել զթուրքն [Էջ 109] առ քահանայապետն, որ եւ կատարեաց արդեամբք:

Գ. Պետրոս²³

Երկու ամօք զկնի Ազարիա Կաթողիկոսի յաստեացս փոխելոյ, յամին 1602, բերիացիք ընտրեցին իւրեանց հովիւ զԿարկանեցին Պետրոս՝ որ կառավարեաց զայն արժոյ գամս եօթն:

Դ. Դաւիթ²⁴

Իբր ի կէս ԺԷ դարուն, էին յազգիս երկու վարդապետք բերիացիք Թովմաս եւ Դաւիթ, զորոց բազում յիշատակք լինին յազգային պատմութեան: Առաջինն եհաս ի պատրիարգութեան Կ. Պօլսի եւ բռնամահ ել յաշխարհէ, իսկ Դաւիթ եղև առաջնորդ Բերիոյ, ո[ր]պ[է]ս արդէն գրեալ ենք ի նախընթաց գլ. յօդ. Բ. Խաչատուր Կաթողիկոս յամի 1663 ձեռնադրեաց ի պատրիարգ ասորոց յաթոնն Բերիոյ զԱնդրեաս Արեճեան, ընդ այս զչարե[ա]յլ Դաւիթի եւ ձեռնառո[թ]ի[ւն] ի Յովհաննէս Պատրիարգի Կ. Պօլսի գտնել զույս ամբարձ ընդդէմ կաթողիկոսին, եւ գրաւեաց զաթոռ կաթողիկոսութեան զՍիս, վանեալ անդէն զԽաչատուր: Սաստկացաւ վէճն յերկուստէք, յայնժամ եկեալ յիրաւախտիւթեան, որոշեցաւ Խաչատրոյ ունել զաթոռ [Էջ 111] հայրապետութեան՝ որպէս յառաջն: Եւ նա հաճեցաւ զի եւ Դաւիթ նստելով ի Բերիա հովուեսցէ զվիճակ զայն Կաթողիկոս մականուամբ, բայց լիցի օգնական եւ ձեռընտու ամենայն պիտոյից իւրոց (այսինքն Խաչատրոյ մեծի Հայրապետի) իբրեւ զմի յարբեպիսկոպոսաց Աթոռոյն: Իբրեւ այսպէս անդորրացաւ վիճակն Խաչատուր Կաթողիկոս գրեաց թուրք ուղիղ դաւանութեան եւ առաքեաց առ սրբազան քահանայապետն Աղեքսանդր Է. ձեռամբ Աշոցայ եպիսկոպոսին յամի 1665 որում ստորագրեալ էին երկուտասան եպիսկոպոսունք: Աստի յայնմանէ յորդորեալ Դաւիթ գրեաց եւ ինքն յամի 1668 ուղիղ դաւանութիւն յաղագս խորհրդոյ հաղորդութեան եւ այլոց մասանց հաւատոյ առ սրբազան քահանայապետն Կղեմէս Թ. յաջորդն Աղեքսանդրի եւ յայսմ թղթոյ վկայութիւն առնու զիբրն մակագրեալ Յաղագս Յարակայութեան Խորհրդոյ Հաղորդութեան,

Հտ. Ա. ի բարբառ գաղղիական ը(ն)դեմ կալուխնե(ա)նց ո(ր)յալ(ես) յիշատակե
Լեքն:

Ե. Յակովբ

Ի վերջոյս ԺԷ. դարուն յաւորս հայրապետութեան Գրիգոր Ժ. ի Կիլիկիա, նստեր յաթոռն Բերիոյ Յակովբ [112] յամի 1693. Սոյն այս Գրիգոր առեալ ընդ իւր զՅակովբ Բերիայ եւ զՅովհաննէս եպիսկոպոսունս չոքաւ ի Հռովմ առ քահանայապետութեամբ Իննովկէնտի(ո)սի ԺԲ. ուր ետուն գղաւնութիւն ուղղափառ հաւատոյ, որպէս վկայե ականատես պատմագիրն Ստեփաննոս Լէմպերկցի: Եւ ապա դարձան ի տեղիս իւրեանց: Չկնի վախճանի այսր Յակովբայ զամս ինչ պարապեալ մնաց աթոռն Բերիոյ, մինչեւ ցամբառնալն Ա[ստուա]ծարեալն Աբրահամու գորմէ ժամ է գրել ինչ սակաւոք:

Այժմու Բերիոյ վիճակին մեջ նախնի հայ եպ[ի]ս[կոպոսու]նք

Անտիոք՝ Գրիգորիոս 1179

Ապամիա Ասորոց՝ Կոստանդին նոյն [1179]

Լատղիկէ՝ Սարգիս նոյն [1179]

Ե[րուսա]ղէմ՝ Սահակ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Միհրան Մինասեան, «Արարելէնով Ստեղծագործած Հալէպահայ Գրողներ», Գեղարդ Մուրիահայ Տարեգիրք՝ Միջ-էթնիկական Սերտան Թեմայով, Զ. Հտր., Հալէպ, 2000, Տպարան Ասֆահանի, էջ 300:

² Նոյն, էջ 302-303:

³ Զմմառու Հայերէն ձեռագիրներու ցուցակը լոյս տեսած է երկու հատորներով՝ Թուցակ Հայերէն Ձեռագրաց Զմմառու Վանքի Մատենադարանին, կազմեց՝ Մեսրոպ Վրդ. Քէչիշեան, Վիեննա, 1964, 811 էջ, եւ Բ. Հտր.՝ Անտոնեան Հաւաքածոյ, կազմեցին՝ Հ. Ներսէս Ակինեան եւ Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1971, 324 էջ: Հայերէն հին ձեռագիրներու հաւաքածոյին կողքին, Զմմառու Վանքը ունի նաեւ նոր ժամանակի Հայերէն ձեռագիրներու պատկանելի հաւաքածոյ մը, որուն տպագիր ցուցակը լոյս չէ տեսած ցարդ:

⁴ Ձեռագիրին լուսապատճէնը ստացած ենք Գերապայժառ Տէր Պետրոս Արք. Միրեաթեանէն եւ Զմմառու Մատենադարանի վարիչ՝ Գերապատիւ Հայր Վարդան Վրդ. Գազանճեանէն, որոնց կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները:

⁵ Միքայէլ Մ. Վրդ. Մոմճեան, «Անդրէաս Գերապայժառ Աղէքսանդրեան», Թուշամատեան Զմմառու Տիրամօր Վանքին Հիմնարկութեան, Մէլ Փրինթ, Պէյրուս, 1999, Բ. Հտր., էջ 153-156: Գառնիկ Ստեփանեան (Կենսագրական Բառարան, Ա. Հտր., Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1973, էջ 73) մահուան թուական կը նշէ 1911:

⁶ Բազմահեղինակ, Հայ Գիրքը 1851-1900 Թուականներին, Երեւան, 1999, էջ 13:

⁷ Նոյն, էջ 21, նաեւ՝ Հ. Գարեգին Չարբանալեան, Հայկական Մատենագիտութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1883, էջ 554-555:

⁸ Վարդան Վրդ. Թէքէեան, «Համառօտ Կենսագրութիւն Աբրահամ Պետրոս Ա. Կաթողիկոսի», Թուշամատեան, Բ. Հտր., էջ 43:

- ⁹ «Հայութիւնը Սուրբոյ մէջ», Հայաստանի Կոչնակ, Նիւ Եորք, ԻԸ. տարի, 16 Յունիս 1928, թիւ 24, էջ 747:
- ¹⁰ Մոմճեան, էջ 156:
- ¹¹ Հ. Վարդան Վրդ. Գազանճեան, «Յուցակ Գիրքերու Հրատարակուած Արժիւեան Ուխտի Միաբաններու Կողմէ», Յուշամատեն, Ա. Հտր., էջ 200: Հմմտ.՝ Յովսէփ Վրդ. Քաջունի, Կենսագրութիւն Գեր. Անդրէաս Աղէքսանդրեանի, Վենետիկ, Ս. Ղազար, 1906:
- ¹² Տես՝ նախորդ ծանօթ.՝ էջ 96:
- ¹³ Ըստ որուն Հայր Աբրահամ (Խալամներու մօտ՝ Իպրահիմ Ալ Խալիլ) Հալէպի բերդին մէջ ամէն առաւօտ թխագոյն կով մը կը կթէր ու անոր կաթը կը բաժնէր շուրջի աբարներուն, որոնք յաճախ կը կրկնէին թէ՛ ابراهيم حلب الشهداء, որ բառացիօրէն կը նշանակէ՝ Իպրահիմը [Հայր Աբրահամը] շահապար [թուխ, գորշ] Հայապա [կթեց], ըստ որուն, քաղաքը՝ ժամանակի ընթացքին, կը ստանայ Շահապա անուանումը: Այժմ գայն յաճախ կը կոչեն «Հայապ Ալ Շահապա»:
- ¹⁴ Միայլ թուագրումով էջ 109ին յաջորդած է էջ 111: Միայլ սրբագրուած է էջ 113ին:
- ¹⁵ Այստեղ մասամբ խուսափած ենք իր տեղեկութիւնները այլ աղբիւրներու հետ համեմատելէ կամ անճշտութիւնները մատնանշելէ, ինչպէս նաեւ իր բնագիրին մէջ յիշուած յատուկ անունները ծանօթագրելէ:
- ¹⁶ Պատմութիւն Հալէպի Հայոց (Քննական) 1355-1908, Գ. Հատոր, Փարիզ, Տպարան Արաքս, 1950:
- ¹⁷ Ահա այդ ցանկը՝ գիրքին մէջ անոնց յիշատակութեան յաջորդականութեամբ, պահպանելով հեղինակի ուղղագրութիւնը: 1- Ճիհաննիւմա: 2- Ռասսէլ եղբայրք, «Քնական Պատմութիւն Հալէպի»: 3- Տ'Արվիէօ: 4- Պրովն: 5- Վոլնէյ: 6- Օլիվիէ: 7- Մ. Քինէ: 8- Համմէր: 9- Նասրէտտին: 10- Ռօպինսոն: 11- Աստուածաշունչ-Մ. Գիրքի քանի մը գիրքեր: 12- Ստրարոն: 13- Պլինիոս: 14- Պողոմէոս: 15- Լուկիանոս: 16- Հեթում Պատմիչ Թաթարաց: 17- Վարդան Պատմիչ: 18- Պատմագիր Նաիմա [թուրք հեղինակ - Մ. Մ.]: 19- Ասորթ ժան եւ էմիլ Իսամպէտ, «Ճանապարհորդութիւն յԱրեւելս» [Ֆրանսերէն, Փարիզ: Տպագրութեան թուականը մերթ կը յիշուի 1861 եւ մերթ՝ 1862 - Մ.Մ.]: 20- Սոկրատ: 21- Գէորգ Լաւոդիկեցի: 22- Աթանաս: 23- Եւստաթիոս Անտիօքացի: 24- Եւսերիոս Եմեսացի: 25- Հերոնիմոս: 26- Ժան Եանոսքի, «Հին Ասորիք», Փարիզ, 1848: 27- Թէոֆանէս: 28- Հերեմիա Սողոմիմոս Սարամիմացի, «Եկեղեցական Պատմութիւն»: 29- Մեծն Աթանաս: 30- Թուղթք Մեծն [Սուրբ - Մ.Մ.] Բարսեղի: 31- Թէոդորէտոս, «Պատմութիւն Կրօնաւորաց»: 32- Յուշիչ: 33- Դիոնիսիոս Պատրիարք Յակոբիկեանց, «ժամանակագրութիւն»: 34- «Ճառ Յաղագս Յակոբիկեանց», Ասսեմանի՝ «Մատենադարան Արեւելեան»: 35- Պրոկոպիոս, «Յաղագս Պատերազմին Պարսից»: 36- Չէզէն: 37- Թէրթի: 38- Միմոն Աուտէ [մարոնի հեղինակ - Մ.Մ.]: 39- Յովսէփ Շէմունի Հասրունեան [=Հասրունի - Մ.Մ.], մարոնի հեղինակ: 40- Նիկեփորոս Կալիոտաս: 41- Յովսէփ Փեսոն՝ «Արրազան Ասորիք» [Ֆրանսերէն - Մ.Մ.]: 42- Մարոնիթներու Հալէպի Առաջնորդական զաւազանագիրք [ձեռագիր - Մ.Մ.]: 43- «Գիրք Պատրիարքութեան Մարոնեաց» Պօղոսի: 44- Հ. Միքայէլ Չամչեան, «Պատմութիւն Հայոց»: 45- Կղեմէս Գալանոս: 46- Լէքէն: 47- Ստեփանոս Լէմպերկի [Լեհացի - Մ.Մ.]: 48- Քոմանյիլլ: 49- Հ. Միքայէլ Չամչեան, «Մեկնութիւն Սաղմոսաց», Հատոր Ե.:
- ¹⁸ Նկատի ունի այդ օրերու Հալէպի հայ կաթողիկէներու առաջնորդ՝ Գրիգորիս Եպսկ. Պալիթը: Վերջինս ծնած է Հալէպ, 28 Դեկտեմբեր 1815ին: Կուսակրօն քահանայ ձեռ-

նադրուած 1843ին, իսկ 2 Փետրուար 1861ին օծուած է առաջնորդ Հալէպի հայ կաթողիկէ համայնքին: Հիմնած է համայնքային քանի մը վարժարաններ: 1867ին մասնակցած է վատիկանի առաջին ժողովին: 1889ին հրատարակած է մասնութեան մասին արարերէն գրքոյկ մը՝ « *أحوال الأحياء* » (Թուղթ հովուական), տպուած՝ Հալէպ, 16 էջ: Առաջնորդի պաշտօնին վրայ մնացած է մինչեւ վախճանումը՝ 26 Դեկտեմբեր 1897:

¹⁹ Ինչպէս նշուեցաւ վերեւ, լիշեալ զէպրը սկսած է 16 Հոկտեմբեր 1850ին եւ ոչ թէ՛ 1851ին:

²⁰ Խօսքը Հալէպի առաջնորդներու հերթականութեան մասին է:

²¹ Տէր Ղազարի նուիրուած տողերը հեղինակը աւելցուցած է աւելի ուշ, այնպէս որ առաջնորդներու հերթականութենէն դուրս մնացած է ան ու առանձին թիւ չէ ստացած:

²² Այս հատուածին կողքին, լուսանցքին վրայ, հեղինակը աւելցուցած է իր աղբիւրները՝ Պատմութիւն Հայոց (Չամչեանի), Հտր. Գ., էջ 528, նաեւ՝ Կղեմէս Գալանոս, Հտր. Բ., էջ 273, 396 եւ նոյնիսկ Յառաջարանը: Հաւանարար նկատի ունի Քայանոսի Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն Ընդ Մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հոսովմախ:

²³ Այս հատուածին կողքին, լուսանցքին վրայ, հեղինակը աւելցուցած է իր աղբիւրը՝ Պատմութիւն Հայոց (Չամչեան), Գ. Հտր., էջ 538:

²⁴ Այս հատուածին կողքին, լուսանցքին վրայ, հեղինակը աւելցուցած է իր աղբիւրը՝ Պատմութիւն Հայոց (Չամչեան), Գ. Հտր., էջ 667, 674, 698, 699, 704:

THE UNPUBLISHED RESEARCH WORK OF
MONSEIGNEUR ANTREAS AGHEKSANTRIAN,
"THE HISTORY OF THE CAPITAL, ALEPPO" (1861)
(Summary)

MIHRAN MINASSIAN

The article sheds light on Mgr. Agheksantrian's unpublished book on Aleppo, called "History of the Capital City Aleppo", which was written in 1861. The only copy of the script we are aware of is preserved in the Zemmar Monastery Collection of Armenian New Manuscripts, # 398 (old list # 663).

It is considered to be the first Armenian book written about Aleppo.

In his article Minassian narrates the biography of the author and gives the list of his published and unpublished books. Minassian assesses the book, gives the list of the author's sources and describes the book in detail. Furthermore, the article includes large parts of the script, particularly sections that have to do with the Armenians.

The script is of 151 pages and is divided into several chapters pertaining to the founding, geography and trade of Aleppo and its history from pre-Christian times up to the author's time. A separate chapter is dedicated to the history of the entry of Christianity into Aleppo, its Dioceses, the lists of the Prelates of the Assyrians, the Greeks and the Maronites, as well as those of the Armenians and the Catholic Armenians. The script includes brief chronologies of the history of Aleppo and lists of those who ruled the city, several censuses conducted during the Ottoman period, a map, etc.